ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 5 - 6 (16400) ՇԱԲԱԹ, 23 ՀՈՒՆՎԱՐԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԴԱՎՈՍԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԼԻԴԵՐՆԵՐԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

Հունվարի 20-23-ին շվեյցարական Դավոս քաղաքում անցկացվեց Համաշխարհային տնտեսական համաժողով (ՀՏՀ), որի մասնակիցները քննարկեցին աշխարհում ֆինանսական բարդ իրադրության պայմաններում Չորրորդ արդյունաբերական հեղափոխության անցկացման հարցերը:

Օրակարգում ներառված են նաեւ փախստականների եւ միգրացիոն քաղաքականության հարցերը, աշխարհատնտեսական մարտահրավերները, գլոբալ անվտանգությունը, առող-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու եւ նահանգապետերի հանդիպմանը քննարկվեցին տարածաշրջաններում առկա հիմնախնդիրներն ու ընթացիկ ծրագրված նախագծերը:



Հանդիպմանն առանձնակի ուշադրություն հատկացվեց յուրաքանչյուր տարածաշրջանի ներդրումային ներուժի, տարածաշրջանների զարգացման հեռանկարների, ներդրումների գրավման հարցին, ինչն ապահովելու է երկրի տնտեսական զարգացումը:

Հանդիպմանը խոսեցին նաեւ բնակչության կարիքների, այդ թվում՝ գազիֆիկացման, ջրամատակարարման եւ ճանապարհների վերանորոգման նախագծերի մասին: Ինչպես հայտարարեց վարչապետը, իշխանության նպատակն է բոլոր ընտանիքներին ապահովել խմելու ջրով եւ այդ ուղղությամբ կիրականացվեն նշանակալից քայլեր:

Գիորգի Կվիրիկաշվիլին մանրամասն տեղեկացավ տարածաշրջաններում իրականացվող նախագծերի ու առաջիկա ծրագրերի մասին:

Վարչապետի եւ նահանգապետերի հանդիպմանը ներկա էին էկոնոմիկայի, տարածաշրջանային զարգացման, էներգետիկայի եւ բնապահպանության նախարարները:

ԲԻԶՆԵՍ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ ԱՅՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹԱՅԻՆ ԵՆ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ երկրի գործարար շրջանների ներկայացուցիչների հետ: Կառավարական գրասենյակում տեղի ունեցած հանդիպման նախաձեռնողը վարչապետն էր, քննարկման թեման՝ հարկային արտոնությունները:

Ինչպես նշվեց հանդիպմանը, վարչապետի նախաձեռնությամբ ծրագրվում է վերացնել եկամտահարկն այն ձեռներեցներից, ովքեր այդ գումարները կներդնեն արտադրության ընդլայնման մեջ: Վարչապետը նշեց նաեւ, որ ընթացքի մեջ է բարեփոխումների երկրորդ բլոկը, որը նախատեսում է գործարարության առավելագույն ընդգրկվածությունը կառավարության կողմից որոշումների ընդուն-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵԵՆԿՈ. «ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ԳՐԻՊԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՍՊԱՌՆԱԼԻՔ ՉԿԱ»

Թբիլիսիում H1N1 վիրուսից, որը հայտնի է նաեւ որպես խոզի գրիպ, ընթացիկ տարվա հունվարի 22-ի դրությամբ գրանցվել է մահվան չորս դեպք: Այդ մասին հայտնել է Վրաստանի հիվանդությունների եւ հանրային առողջության նկատմամբ հսկողության ազգային կենտրոնը:

Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեեենկոյի հավաստմամբ, երկրում գրիպի համաճարակի տարածման վտանգ չկա: Ինչ վերաբերում է վիրուսի դեմ պայքարի համար, առողջապահության նա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հունվարի 21-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին ընդունեց Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակությանը՝ փոխնախագահ, Ազգային ժողովի «Հայաստան-Վրաստան» բարեկամության խմբի ղեկավար Հերմինե Նաղդալյանի գլխավորությամբ:

Հանդիպմանը մասնակցում էին Վրաստանի խորհրդարանի միջազգային հարաբերությունների կոմիտեի նախագահ Թեդո Ջափարիձեն, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Թեւան Պողոսյանը եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

Նույն օրը Հերմինե Նաղդալյանը հանդիպում ունեցավ Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակ, խորհրդարանի «Հայաստան-Վրաստան» բարեկամության խմբի ղեկավար Մանանա Կոբախիձեի հետ: Հանդիպմանը ներկա էին Թեդո Ջափարիձեն, խորհրդարանական փոքրամասնության ներկայացուցիչ, Ազգային շարժման անդամ Թինաթին Բոկուչավան, Թեւան Պողոսյանը եւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:

Վերոնշյալ հանդիպումներում քննարկվեցին երկու երկրների միջեւ առկա հարաբերությունների, միջխորհրդարանական համագործակցության խորացման եւ միջխորհրդարանական բարեկամության խմբերի ակտիվացման հետ առնչվող հարցեր:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն հանդիպում ունեցավ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին եւ նրանց ներկայացրեց արտաքին գերատեսչության գլխավոր առաջնահերթությունները:

Վրաստանի ԱԳ նախարարը առանձնակի ուշադրություն հատկացրեց Եվրամիությանն ինտեգրման հարցին, որը, նրա խոսքերով, «ոչ միայն արտաքին քաղաքական կուրսի գլխավոր առաջնահերթությունն է, այլեւ ազգային նույնականացման հատվածը, որից ելնելով էլ՝ վրաց ժողովուրդը լրիվությամբ ընդունում է եվրոպական արժեքների համակարգը եւ հավատում, որ Վրաստանի անվտանգ, կայուն եւ ժողովրդավարական զարգացումը հնա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԱՎՈՍԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԼԻԴԵՐՆԵՐԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ջապահությունը, կրթությունը, գենդերային տարբերությունների եւ կլիմայի փոփոխման թեմաները:

Համաժողովին մասնակցում են աշխարհի հարյուր երկրների ավելի քան 2500 ներկայացուցիչներ, այդ թվում՝ պետությունների ու կառավարությունների 40 ղեկավարներ: Համաժողովի աշխատանքին մասնակցում է նաեւ Վրաստանի պատվիրակությունը՝ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու գլխավորությամբ:

Ելույթ ունենալով համաժողովում, Վրաստանի վարչապետը խոսեց երկրում իրականացված բարեփոխումների, տնտեսական առաջնահերթությունների առաջիկա ծրագրերի մասին:

Համաշխարհային տնտեսական համաժողովի շրջանակներում՝ Գիորգի Կվիրիկաշվիլին անցկացրեց մի շարք երկկողմ հանդիպումներ: Մասնավորապես, Վրաստանի վարչապետը հանդիպեց ԱՄՆ պետքարտուղարի օգնական Վիկտորյա Նուլանդի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, Նիդերլանդների վարչապետ Մարկ Ռուտեյի, եվրոպական ներդրումային բանկի նախագահ Վերներ Հոյերի, վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի նախագահ Սումո Չակրաբորտիի, Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Տոնի Բլերի, գործարար շրջանների եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Դավոսում Վրաստանի վարչապետի գլխավորած պատվիրակության կազմում էին Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն, ազգային ներդրումային գործակալության տնօրեն Գիորգի Պերտաիան, «Վրացական երկաթուղու» գլխավոր տնօրեն Մամուկա Բախտաձեն, համաներդրումային հիմնադրամի գործադիր տնօրեն Գիորգի Բոճիաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱԼՅԱՆՍԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Դավոսում, աշխատանքային այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգի հետ:

Հանդիպման ավարտից հետո ալյանսի գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն «կշարունակի համագործակցությունը Վրաստանի հետ»:

Ստոլտենբերգը նշեց նաեւ, որ «դա Գիորգի Կվիրիկաշվիլու հետ առաջին հանդիպումն էր Վրաստանի վարչապետի պաշտոնում նրա հաստատվելուց հետո, թեեւ «մենք ծանոթ էինք այն շրջանից, երբ նա աշխատում էր որպես երկրի արտաքին գործերի նախարար»:

Ստոլտենբերգը հայտնեց, որ Կվիրիկաշվիլու հետ հանդիպմանը «քննարկվել են ՆԱՏՕ-ի՝ 2016 թվականի հունիսին Վարշավայում կայանալիք գագաթաժողովի, ինչպես նաեւ պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների՝ փետրվարին Բրյուսելում նշանակված նախարարական հանդիպման եւ ՆԱՏՕ-Վրաստան հանձնաժողովի նիստի հարցերը»:

Իր հերթին, Վրաստանի վարչապետ Գիորեգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ Ստոլտենբերգի հետ հանդիպմանը քննարկվել են «ՆԱՏՕ-ին երկրի ինտեգրացման եւ բարեփոխումների շարունակման հարցերը»:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

ՆԵՐԿՐՎՈՂ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԾԱՎԱԼԸ ԿԱՐՈՂ Է ԿՐԿՆԱՊԱՏԿՎԵԼ

Ռուսական բնական գազի բաժինը, որն այդ վառելիքի նկատմամբ Վրաստանի պահանջարկի ընդհանուր ծավալում ներկայում կազմում է 12 տոկոս, ընթացիկ տարում կարող է հասցվել 20 տոկոսի: Այդ մասին հայտարարեց Վրաստանի էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն:

«Մենք շարունակում ենք բանակցությունները «Գազպրոմ»-ի հետ՝ նպատակ ունենալով լրացուցիչ ծավալներով գազ ստանալ երկրի աճող պահանջմունքները բավարարելու համար»,- նշեց Կախի Կալաձեն՝ «Ռուսթավի 2» հեռուստաընկերության եթերում:

Նա հայտնեց, որ այդ հարցի շուրջ Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում «Գազպրոմ»-ի ներկայացուցիչների հետ հերթական հանդիպումից հետո հասարակայնությունը կտեղեկացվի դրա արդյունքների մասին:

Ընդսմին նախարարը նշեց, որ «Գազպրոմ»-ը պահանջում է դրամական հաշվարկների անցնել Հայաստան ռուսական գազի տարանցման համար՝ այն 10 տոկոսի փոխարեն, որը ներկայում գործող պայմանագրի համաձայն Վրաստանն ստանում է դրա ընդհանուր ծավալից:

«Բնականաբար, երբ ռուսական կողմը դրեց այդ հարցը, մենք կտրականապես դեմ էինք, սակայն միաժամանակ հայտարարվեց, որ «Գազպրոմ»-ն իրական հնարավորություն ունի իր գազը Հայաստանին մատակարարել Իրանի միջոցով»,- նշեց Կալաձեն: Նրա խոսքով՝ «նման վտանգ, իհարկե, գոյություն ունի, եւ Վրաստանի համար դրա հետեւանքը էներգետիկական առումով շատ ծանր կլինի»:

Էներգետիկայի նախարարը հայտնեց, որ այդ կապակցությամբ արդեն մի քանի հանդիպում է կայացել «Գազպրոմ»-ի ներկայացուցիչների հետ, բայց առայժմ համաձայնություն ձեռք չի բերվել: Դրա հետ մեկտեղ նա ընդգծեց, որ Ադրբեջանը, որը եղել ու մնում է Վրաստանին բնական գազի հիմնական մատակարարը, ներկա փուլում տեխնիկապես չի կարող ծածկել ձմռանը երկրում առաջացող գազի պակասորդը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՏ

ԸՆՏՐՎԵՑԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հունվարի 18-ին Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանում տեղի ունեցավ Վրաստանի ժողովրդական պաշտպանին (օմբուդսմենին) առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի աշխատանքային հանդիպումը օմբուդսմենի առաջին տեղակալ Պատա Բելթաձեի հետ, որի ընթացքում քննարկվեցին խորհրդի առաջիկա աշխատանքի ծրագրերը:

Հանդիպմանը ազգային փոքրամասնությունների խորհուրդն իր կազմից ընտրեց «Հանդուրժողականության եւ քաղաքացիական ինտեգրման ազգային հիմնադրույթի եւ գործողության ծրագրի» կատարման մոնիտորինգի խմբի անդամներին: Ընտրված խմբերի անդամները, անկախ փորձագետների հետ միասին, գործելու են չորս ուղղություններով՝ 1.օրենքի գերակայության (ընտրվել են Ռիտա Գրիգորյան-Խիդիրբեգաշվիլին եւ Մարինա Բաբունաշվիլին), 2.պետական լեզվի եւ կրթության (Լիլի Սաֆարովան, Լեյլա Մամեդովան), 3.մշակույթի եւ ինքնության պահպանման (Վալենտինա Ցիկբո-Մարջանիշվիլին, Մարինա Սոլոմոնիշվիլին), 4.լրատվամիջոցների եւ տեղեկատվության մատչելիության (Միխեիլ Այդինովը, Զաուր Խալիլովը) հարցերով:

Խորհուրդը իրականացնում է հանդուրժողականության եւ քաղաքացիական ինտեգրման ազգային հիմնադրույթի կատարման ամենամյա ստուգումը, բացահայտում ծրագրի իրականացման գործընթացում թույլ տված թերացումներն ու ձեռքբերումները: Մոնիտորինգի հիման վրա խորհուրդը մշակում է հանձնարարականներ, ապա գործում այդ հանձնարարականների ներդրման ուղղությամբ, ինչը նշանակալի ներդրում է երկրում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության եւ քաղաքացիական ինտեգրման ամրապնդման տեսանկյունից:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ



ԻՐԱՆ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՆՎԵԼ ԵՆ

Իրանը հունվարի 16-ից ազատվել է միջազգային հանրության կողմից իր վրա դրված պատժամիջոցների մեծ մասից: Պատժամիջոցների չեղարկման փաստը հաստատել են Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին եւ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին: Այսպիսով, Իրանը բոլոր ոլորտներում կրկին դառնում է միջազգային համագործակցության լիիրավ անդամ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՌՈՒԲԼՈՒ ԿՈՒՐՍԻ ՏԱՏԱՆՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Մոսկվայի բորսայում ռուբլին հունվարի 22-ին սակարկություններն սկսել է կտրուկ աճով: Դոլարի փոխարժեքը հունվարի 21-ի սակարկությունների փակման մակարդակի նկատմամբ ընկել 2,82 ռուբլով՝ մինչեւ 82 ռուբլու նշագիծ, իսկ եվրոյինն ընկել է 3,52 ռուբլով՝ մինչեւ 86,47 ռուբլի: Ընդսմին առավելագույն ցուցանիշների համեմատությամբ դոլարի փոխարժեքն արդեն ընկել է 6,18 ռուբլով, իսկ եվրոյինը՝՝ 7,23 ռուբլով:

Ռուբլու փոխարժեքի աճը տեղի է ունենում նավթի գների արագ աճի ֆոնին: Այսպես, հունվարի 22-ին Լոնդոնի ICE բորսայում 2016 թվականի մարտի մատակարարման Brent մակնիշի նավթի ֆյուչերսի արժեքը բարձրացել է 5,3 տոկոսով՝ բարելի դիմաց մինչեւ 30,5 դոլար: Ընդ որում՝ նախքան Մոսկվայի բորսայում սակարկությունների սկսվելը, Brent-ի գինը գերազանցել էր բարելի դիմաց 31 դոլարի նշագիծը:

ՄՈԼԴՈՎԱ

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՎԵՑ ՑՈՒՅՑԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մոլդովայի խորհրդարանի պատգամավորները հաստատել են Պավել Ֆիլիպի ղեկավարությամբ երկրի կառավարության կազմը եւ գործունեության ծրագիրը:

Նախարարների կազմը հաստատվել է հաշված րոպեների ընթացքում: Խորհրդարանը չի քննարկել կառավարության գործունեության ծրագիրը, քանի որ շենքի առջեւ հավաքվել է բազմահազարանոց ամբոխ: Պատգամավոր-սոցիալիստները դժգոհել են իրավիճակից՝ շեշտելով, որ ստեղծվել է անօրինական խորհրդարանական մեծամասնություն եւ չի քննարկվել նոր կառավարության ծրագիրը:

Քիշնեւում բողոքի ցույցի մի քանի մասնակից ներխուժել է խորհրդարանի շենք: Ցուցարարները պահանջում են հանդիպել պատգամավորների հետ: Նրանք դեմ են նոր կառավարության հաստատմանը:

ԱՄԿ

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԹԻՎԸ ԿՀԱՍՆԻ 200 ՄԻԼԻՈՆԻ

Գործազուրկների թիվն աշխարհում 2016-2017 թվականներին կշարունակի աճել եւ այդ ժամանակաշրջանում կգերազանցի 200 միլիոնը: Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) զեկույցում նշվում է, որ 2015 թվականին համաշխարհային տնտեսության աճը կազմել է 3,1 տոկոս, «Տնտեսության այս թուլացումը» հանգեցրել է «գործազրկության աճի շարունակման», որը հասել է 197,1 միլիոնի: Սա գրեթե 1 միլիոնով ավելի է, քան 2014 թվականին, եւ 27 միլիոնով ավելի՝ մինչճգնաժամային 2007 թվականից: «Ամենավերջին կանխատեսումների համաձայն՝ 2016 թվականին աշխարհում գործազրկության աճ է սպասվում մոտավորապես 2,3 միլիոնով ու եւս 1,1 միլիոնով՝ 2017 թվականին», այսինքն՝ համապատասխանաբար մինչեւ 199,4 միլիոն եւ 200,5 միլիոն, նշել են փորձագետները:

Ճարաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԻԹ ՍԵՐԳԵԵՆԿՈ. «ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ ԵՄ, ՈՐ ԳՐԻՊԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՍՊԱՌՆԱԼԻՔ ՉԿԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խարարության կողմից ձեռնարկած հատուկ միջոցների, ապա Սերգեենկոյի հայտարարությամբ, դրանք ուղղված են ոչ թե համաճարակի դեմ պայքարի, այլ՝ բժշկական հաստատությունների նորմալ աշխատանքի կարգավորմանը:

«Ցանկանում եմ վստահեցնել, որ գրիպի համաճարակի տարածման սպառնալիք չկա, հետեւաբար խուճապի համար հիմքեր գոյություն չունեն: Մեր կողմից ձեռնարկված քայլերի գլխավոր խնդիրն է բեռնաթափել շտապ օգնության ծանրաբեռնված աշխատանքը»,- հայտարարեց նախարարը եւ հավելեց, որ վարակված հիվանդների համար երկրի բժշկական բոլոր հաստատությունները կսկսեն գործել 24-ժամյա աշխատակարգով: Նախարարի խոսքերով, ոլորտի առաջնային ուղղակի ղեկավարները լրիվ պատրաստակամություն են հայտնել՝ սահմանել օրուգիշերվա հերթապահություն եւ անհրաժեշտության դեպքում, լինել տեղերում, հիվանդներին հոսպիտալացնել: «Ձեռնարկված միջոցառումների շրջանակներում ընտանեկան բժիշկները ապահովվել են նախարարության կողմից հատկացված համապատասխան տրանսպորտով»,- ընդգծեց նախարարը:

Նշենք, որ H1N1 վիրուսով հիվանդանալու դեպքեր Վրաստանում գրանցվում են 2009 թվականի հուլիսից: Մինչ օրս երկրում դրանից մահացել է 39 մարդ: Իսկ ընդամենն արձանագրվել է այդ վիրուսով հիվանդանալու՝ լաբորատոր ճանապարհով հաստատված 567 դեպք:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

4,95 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ԱՄՆ-ԻՑ

ԱՄՆ կառավարությունը սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց, կանանց, երիտասարդների, ազգային փոքրամասնությունների ու չպաշտպանված խմբերի ներկայացուցիչների ներգրավմանն ու ինտեգրմանն աջակցելու նպատակով, Վրաստանին հատկացրել է 4,95 միլիոն դոլար:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանում UDAID-ի ներկայացուցչությունը, USAID-ի կովկասյան առաքելության տնօրեն Դուգլաս Բոլլը եւ Վրաստանի ֆինանսների նախարարը ստորագրել են դրամաշնորհային համաձայնագիր:

Այն նախատեսում է ԱՄՆ կառավարության կողմից 5 տարի ժամկետով վերոնշյալ գումարի հատկացումը սահմանափակ հնարավորություն ունեցող անձանց, կանանց, երիտասարդների, ազգային փոքրամասնությունների ու չպաշտպանված խմբերի ներկայացուցիչների ներգրավման ու ինտեգրման աջակցության համար: Ինչպես նշեցին առաքելությունում, սույն համաձայնագիրը Վրաստանին կօգնի կառուցելու առավել կայուն, առողջ եւ ինտեգրված հասարակություն: Համաձայնագիրը երրորդն է երկու երկրների կառավարությունների միջեւ:

Հիշեցնենք, որ 2015 թվականի դեկտեմբերին ստորագրվել էին երկու համաձայնագրեր, որոնց շրջանակներում առաջիկա հինգ տարիների ընթացքում ժողովրդավարական զարգացման գործընթացների աջակցության համար Վրաստանը կստանա 69,3 միլիոն դոլար: Վերջին 23 տարիների ընթացքում, Վրաստանում իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորման համար Միացյալ Նահանգներից փոխանցվել է շուրջ 4 միլիարդ դոլար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՑ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ Abrams ՏԱՆԿԵՐՈՎ

Noble Partner-2016 («Արժանի գործընկեր») վրաց-ամերիկյան համատեղ ընդգրկուն զորավարժությունների ընթացքում, որոնք մայիսին անցկացվելու են Թբիլիսիի մերձակայքում, գործի կդրվեն Abrams տանկեր: Այդ մասին հայտնեց Վրաստանի պաշտպանության նախարար Թինա Խիդաշելիին:

Նշենք, որ անցյալ տարվա մայիսին վրացի 400 զինծառայողների եւ ավելի քան 200 ամերիկացի զինվորականների մասնակցությամբ վրաց-ամերիկյան լայնածավալ վարժանքներ անցկացվեցին Թբիլիսիի մերձակա «Վազիանի» ռազմակայանում:

Հատուկ անցյալ տարվա զորավարժությունների համար Վրաստան էր հասցվել ամերիկյան ծանր ռազմական տեխնիկա՝ հետեւակի «Բրեդլի» 14 մարտական մեքենա, լոգիստիկայի ապահովման մեքենաներ, ինչպես նաեւ զորավարժությունների համար նախատեսված հանդերձանք: 2016 թվականին պլանավորված վարժանքների համար ԱՄՆ-ից կուղարկվեն մեքենայացված եւ հետեւակային ստորաբաժանումների զինծառայողներ:

Վրացի զինվորականներն ամերիկյան տանկերն ստանալուց առաջ վարժանքներ են անցկացնում ԱՄՆ-ի այլ ռազմական տեխնիկայով: Հեռուստաընկերության տվյալներով՝ վրացական կողմն արդեն ԱՄՆ-ից ստացել է 70 տոննա ռազմական բեռներ եւ, տանկերից բացի, սպասում է լրացուցիչ այլ բեռներ:

Թեպետ Թինա Խիդաշելու հայտարարությամբ խոսքը չի վերաբերում զենքին: «Abrams տանկերը Վրաստանում կհայտնվեն ոչ թե ուժի ցուցադրման համար, այլ ապացուցելու, որ երկիրը մենակ չէ»,- ընդգծեց պաշտպանության նախարարը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի ՆԳ նախարարությունը հրապարակեց 2015 թվականի իրավախախտումների վիճակագրությունը, որը ներառում է տարբեր նախարարությունների ենթակայության տակ գտնվող քրեական հանցագործությունները հետաքննող ստորաբաժանումների, մասնավորապես, Վրաստանի գլխավոր դատախազության, արդարադատության նախարարության, պաշտպանության նախարարության, քրեա-կատարողական եւ պրոբացիայի նախարարության, ֆինանսների նախարարության եւ ներքին գործերի նախարարության տվյալները:

2015 թվականի դեկտեմբերին բոլոր ստորաբաժանումների կողմից վավերացվել է 3612 իրավախախտում, որից 1357-ը՝ բացահայտվել է: Բացահայտման մակարդակը կազմել է 37,57 տոկոս, նախորդ տարվա՝ 2014 թվականի դեկտեմբերի համեմատությամբ, իրավախախտումների թիվն աճել է 3,97 տոկոսով:

Ընդհանրապես 2015 թվականին բոլոր ստորաբաժանումների կողմից գրանցվել է 35,095 իրավախախտում, որից 21176-ը՝ բացահայտվել է: Բացահայտման մակարդակը կազմել է 60,34 տոկոս: 2014-ի համեմատությամբ, իրավախախտումների թիվը նվազել է 3,92 տոկոսով:



ԱՅՑԵԳԻՐ՝ 48 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«France-24» հեռուստաալիքին տրված հայրցազրույցում, Ֆրանսիայի նախարար Լորան Ֆաբիուսը հայտարարեց, որ Վրաստանի քաղաքացիները կկարողանան Ֆրանսիայի այցեգիր ստանալ 48 ժամվա ընթացքում: Վրաստանի քաղաքացիների հետ միասին նման արտոնություն է սահմանվել նաեւ Հայաստանի, Ինդոնեզիայի, Թուրքիայի եւ Վիետնամի քաղաքացիների համար: Նրա խոսքերով, աշխատանքներ են տարվում նաեւ Չինաստանի քաղաքացիների համար այցեգրի հանձնումը 24 ժամում հանձնելու ուղղությամբ: Թեպետ Լորան Ֆաբիուսը չի կոնկրետացրել, թե երբ կսկսվի այցեգրերի հանձնումը:

ՀԱՅՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Վրաստանի կառավարությունը հավանություն է տվել արդարադատության նախարարության կողմից մշակված օրինանախագծին, ըստ որի ծրագրվում է հիմնել ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի որոշման կատարման մեխանիզմ: Վրաստանի քրեական վարչական եւ քաղաքացիական օրենսգրքերի փոփոխությունները ներկայացրեց արդարադատության նախարար Թեա Ցուլուկիանին: Առաջարկվող փաթեթի համաձայն, վրացական դատարանին տրվում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի որոշման ենթակա անձանց փոխհատուցում ստանալու հարցով, հայցը քննարկելու իրավունքը:

ԲԵԼԱՌՈՒՍԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Բելառուսը դեսպանատուն է բացում Վրաստանում: Այդ մասին ասված է Բելառուսի հանրապետության նախարարների խորհրդի որոշման մեջ, որը տարածվել է հունվարի 22-ին:

«Բելառուսի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հաստատությունների վերաբերյալ դրույթի 8-րդ կետին համապատասխան, Բելառուսի Հանրապետության նախարարների խորհուրդը որոշում է. 2016 թվականին Բելառուսի Հանրապետության դեսպանատուն բացել Վրաստանում»,- ասված է փաստաթղթում:

Նախարարների խորհրդին կարգադրված է ֆինանսավորել Վրաստանում Բելառուսի դեսպանատան բացման եւ պահելու ծախսերը:

ԱԲԽԱԶԻԱՆ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄՐԳԵՐԻՑ

Ինքնահռչակ Աբխազիայի վարչապետ Արթուր Միկվաբիան հաստատել է թուրքական այն մթերքների ցանկը, որոնց մուտքը երկիր արգելվում է:

Աբխազիայում կհրաժարվեն թուրքական ձկնեղենից, կարտոֆիլից, տոմատից, սոխից, կաղամբից, վարունգից, արեւադարձային մրգերից, խաղողից, սեխից, խնձորից, տանձից, սալորից եւ դեղձից:

Թուրքական ապրանքների մուտքի արգելքի մասին օրենքը կգործի այս տարվա մարտի 1-ից: Միաժամանակ շեշտվում է, որ արգելքը չի գործի այն պարագայում, երբ մթերքը կբերվի անձնական օգտագործման համար: Միաժամանակ, ինքնահռչակ հանրապետության վարչապետն արգելել է թուրքական ղեկավարությամբ հասարակական կազմակերպությունների գործունեությունը Աբխազիայում: Աբխազիայի կառավարությունը նման որոշում էր կայացրել այս հունվարի սկզբին, երբ Վլադիմիր Պուտինի օգնական Վլադիսլավ Սուրկովը հանդիպեց Աբխազիայի կառավարության անդամների հետ:

ԲԻԶՆԵՍ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ ԱՅՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹԱՅԻՆ ԵՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ման գործընթացում:

Ինչ վերաբերում է բարեփոխումների երրորդ բլոկին, ապա Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքերով, այն նախատեսում է տարածաշրջանների զարգացումը: Վարչապետը նշեց, որ տարածաշրջանների մարդկանց մոտ բացակայում է զգացումը, որ իրենք որեւէ կերպ մասնակցում են որոշումների ընդունման գործընթացին:

Ինչպես հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, կառավարության մոտ հետաքրքիր առաջարկություններ են ծագել՝ ուղղված ձեռներեցներին: Նրա խոսքերով, գործադիրը ցանկանում է տեղեկանալ մասնավոր հատվածի կարծիքին առանձին հարցերի կապակցությամբ: «Մենք ցանկանում ենք ձեզ հետ քննարկել այն հիմնական ուղղությունները, որոնք կառավարության համար առաջնահերթային են: Հստակեցվել են չորս հիմնական ուղղություններ: Դրանք են՝ նոր աշխատատեղերի ստեղծումն ու տնտեսական զարգացման աջակցության բարեփոխումները: Այդ բարեփոխումները հնարավոր է բաժանել մի շարք ենթակետերի: Դա հարկային բարեփոխումն է, որն ուղեկցվելու է ինչպես օրենսդրական, այնպես էլ՝ վարչական հատվածով: Նկատի ունեմ միայն բաշխվող եկամտի հարկադրումն ու հարկերից ազատումը, ինչպես նաեւ վարչական հարկային մարմինների եւ նրանց գործողության առավելագույն կարգավորումը, որպեսզի յուրաքանչյուր ստուգումը սահմանափակվի ժամանակի տեսանկյունից»,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց. «Գլխավոր առաջնահերթությունը հանդիսանում է բանկերի վրա հարկային ծառայության ճնշման դադարեցումը: Եթե ձեռներեցությունը ճնշման ենթարկվի հարկային ծառայությունների եւ ֆինանսական ոստիկանության կողմից, ապա դա կդառնա ներդրումների դադարեցման պատճառ»:

Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքերով, լուրջ բարեփոխումներ պետք է անցկացվեն կրթական ոլորտում: «Գտնում եմ, որ հարկ է անցկացնել լուրջ բարեփոխումներ առանձին ուղղություններով: Կառանձնացնեմ երեք հիմնական ուղղությունները. առաջինը մասնագիտական կրթության զարգացումն է եւ երկրում մասնագիտական կրթության հեղինակության բարձրացումը, երկրորդը՝ ընդհանուր կրթական բարեփոխումն է եւ երրորդը՝ բարձրագույն կրթության հիմնարար բարեփոխումն է: Դրանք այն առաջնահերթություններն են, որոնց ուղղությամբ մոտ ժամանակներում կնշակվեն կոնկրետ ծրագրեր»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րավոր է միայն եվրոպական եւ տրանսատլանտյան տարածքում»:

Հանդիպմանը քննարկվեց նաեւ Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնման թեման եւ որպես կառավարության գլխավոր մարտահրավեր այդ ենթատեքստով ներկայացվեց Վրաստանի կոնստրուկտիվ մոտեցումը Ժնեւի միջազգային բանակցություններին:

Հանդիպմանը Վրաստանի ԱԳ նախարարը հանրագումարեց նախորդ տարվա արդյունքները, ներկայացրեց առանձին ուղղություններով առկա առաջընթացը: Մասնավորապես ընդգծվեց Եվրամիության հետ ասոցիացման եւ ազատ առեւտրի համաձայնագրի ստորագրումը այցեգրային պայմանակարգի ազատականացման հարցով ստանձնած պարտավորությունների հաջող կատարումը, ՆԱՏՕ-Վրաստան համատեղ ուսումնա-մարզական կենտրոնի բացումը: Ջանելիձեն որպես կարեւոր առաջնահերթություն ընդգծեց տնտեսական դիվանագիտությունը եւ Եվրոպայի ու Ասիայի միջեւ որպես կապի օղակ Վրաստանի դերը:

Հանդիպման ավատին Միխեիլ Ջանելիձեն դիվանագիտական կորպուսին շնորհակալություն հայտնեց կատարած աշխատանքի համար:

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏ

ԳԱԳԻԿ ԿԱՐՍԼՅԱՆ. «ԱՅՍ ՏԱՐՎԱՆԻՑ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՍ ՄԵԾ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ Է ՏՐՎԵԼ»

Եզրագիծը հատեց 2015 թվականը: Այն նշանակալի էր ոչ միայն երկրի, այլեւ առանձին վերցրած տարածաշրջանների ու մունիցիպալիտետների համար: Կառավարության կողմից երկրում դեռեւս անցյալ տարվա սկզբից վերցրած սոցիալական կողմնորոշման քաղաքականությունը նշանակալի արդյունքների հանգեցրեց: Հիմնվեցին եւ հաջողությամբ գործեցին մի շարք սոցիալական կողմնորոշման նախագծեր, հիմնադրամներ: Համընդհանուր շարժումից անմասն չմնաց նաեւ Նինոծմինդայի մունիցիպալիտետը: Ձեզ ենք ներկայացնում շրջանում կատարված աշխատանքների, իրականացված ծրագրերի մասին մեր հարցազրույցը Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության նախագահ ԳԱԳԻԿ ԿԱՐՍԼՅԱՆԻ հետ:

- Պարոն Կարսլյան, սովորաբար, տարեվերջին ստեղծված ավանդույթի համաձայն, յուրատեսակ հաշվետվություն է ներկայացվում կատարված աշխատանքների ու առաջիկա ծրագրերի վերաբերյալ: Մունիցիպալիտետի համար ինչո՞վ էր հատկանշական 2015 թվականը:

- Միանգամից ասեմ, որ անցած տարին կարելի է դասել բեկումնայինների թվում: Խոսքս հիմնականում վերաբերում է սոցիալական ուղղությամբ մունիցիպալիտետում տեղ գտած փոփոխություններին: Դատեք ինքներդ, անցած տարվա համար մունիցիպալիտետի բյուջեով 256 հազար լարի է ծրագրվել սոցիալական հարցերի կարգավորման համար: Չխորանալով մանրամասների մեջ՝ նշեմ, որ այդ գումարը ծախսվել է անհետաձգելի վիրահատությունների, ստացիոնար բուժման, դեղորայքի գնման, հաշմանդամների սայլակների ձեռքբերման համար: Ֆինանսական օգնություն է ցուցաբերվել ծնողազուրկ երեխաներին ու բազմազավակ ընտանիքներին, կերակրողից զրկված եւ բազմանդամ ընտանիքներին, առաջին խմբի հաշմանդամներին, ի ծնե հաշմանդամներին: Բնականաբար, չեն անտեսվել նաեւ երկրորդ աշխարհամարտի վետերաններն ու նրանց հավասարեցված անձինք, Վրաստանի տարածքային ամբողջականության համար պատերազմների մասնակիցները: Շարունակելով նախորդ տարիների պրակտիկան՝ 2015-ին էլ սոցիալական օգնություն ցուցաբերվեց միայնակներին, սոցիալապես անապահովված ընտանիքներից ուսանողներին, տարերային աղետներից տուժածներին:

- Իսկ ի՞նչ կասեիք մունիցիպալիտետում իրականացված ենթակառույցային նախագծերի մասին:

- Ինչպես արդեն նշեցի, 2015-ը բեկումնային էր: Այն բեկումնային էր նաեւ ենթակառույցային նախագծերի թե' քանակական եւ թե' որակական առումով: Մունիցիպալային բյուջեի համաֆինանսավորմամբ իրականացվել է 36 նախագիծ, որի ընդհանուր գումարը կազմեց 1 միլիոն 629840 լարի: Այդ գումարով ճանապարհների վերանորոգման եւ ասֆալտապատման աշխատանքներ անցկացվեցին անմիջականորեն Նինոծմինդայում, Գանձա, Տամբովկա, Մեծ եւ Փոքր Գոնդուրա, Դիլիֆ, Հեշտիա, Ուչմանա, Թորիա գյուղերում: Փոկա, Գորելովկա, Մեծ Արագյալ, Սաթխա, Վլադիմիրովկա գյուղերում վերանորոգվեցին մշակութային օբյեկտները, արարողությունների տան վերանորոգումներ անցկացվեցին եւս մի շարք գյուղերում: Բյուջեի համաֆինանսավորմամբ, ջրամատակարարման հարցերը կարգավորվեցին Նինոծմինդայում, Ջիգրաշեն, Փոքր Պամաճ, Գանձա, Դիլիֆ, Սաթխա, Օրոջալար գյուղերում: Նինոծմինդայում, ջրամատակարարման համակարգից բացի, կարգավորվեց նաեւ կոյուղու համակարգը: Նինոծմինդայում եւ մի շարք այլ գյուղերում վերանորոգման աշխատանքներ տարվեցին մարզական օբյեկտներում:

- Որքանով տեղեկացված ենք, մունիցիպալիտետում նախագծեր իրականացվեցին նաեւ առանձին հիմնադրամների ու կառավարական ծրագրերի շրջանակներում: Ի՞նչ կասեիք այդ մասին:

- Դուք իրավացի եք, մունիցիպալիտետում, իրոք, ենթակառույցային նախագծեր իրականացվեցին տարածաշրջանային զարգացման հիմնադրամի, ինչպես նաեւ «Գյուղի աջակցության» կառավարական ծրագրի շրջանակներում:

Տարածաշրջանային զարգացման հիմնադրամի կողմից հատկացված 1 միլիոն 700 հազար լարի գումարով ասֆալտապատման աշխատանքներ տարվեցին Գանձա, Հեշտիա, Սաթխա գյուղերում: Ընդհանուր առմամբ, ասֆալտապատվեց մոտավորապես 3«5 կիլոմետր ճանապարհ: Ինչ վերաբերում է «Գյուղի աջակցության» կառավարական ծրագրով իրականացված նախագծերին, ապա հատկացված 543 հազար լարիով իրականացվեցին շուրջ 40 նախագծեր, որոնք հիմնականում առնչվում էին ջրամատակարարման համակարգերի կարգավորմանը, արարողությունների եւ մշակութային տների վերանորոգմանը, կամուրջների կարգավորմանը, մարզահրապարակների բարեկարգմանը, Նինոծմինդայում եւ գյուղերում փողոցների լուսավորմանը, ինչպես նաեւ գյուղերում ներքին ճանապարհների կարգավորմանը:

Ավելացնեմ նաեւ, որ մունիցիպալիտետի 10 վարչական միավորից 7-ում ավարտվել է գազիֆիկացումը: Առաջիկայում ծրագրում ենք գազիֆիկացումն ավարտել մնացած երեք՝ Փոկա, Գորելովկա եւ Տամբովկա վարչական միավորումներում:

- Մեկնարկել է 2016 թվականը, ի՞նչ ծրագրեր է նախատեսում մունիցիպալիտետի վարչությունը նոր տարվա համար, որո՞նք են այս տարվա առաջնահերթությունները:

- Բարեբախտաբար, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում կատարված փոփոխությունները շատ ավելի մեծ ազատություն են ընձեռում տեղական իշխանությանը, ինչպես ֆինանսների ստացման, այնպես էլ՝ դրանց իրացման ուղղությամբ: Այս տարի մունիցիպալիտետի վարչությունը կկարողանա ինքնուրույն հստակեցնել այն նախագծերը, որոնք անմիջականորեն կարող են ազդեցություն գործել մարդկանց բարեկեցության վրա: Ելնելով դրանից էլ՝ ծրագրել ենք 2016 թվականի բյուջեն: Այս տարի էլ գլխավոր առաջնահերթությունը սոցիալական ոլորտն է: Թեպետ, ի տարբերություն նախորդ տարիների, այդ նպատակների համար ծրագրում ենք ծախսել շատ ավելի նշանակալից գումար: Նշանակալիորեն ավելացված են սոցիալական ծրագրերով ֆինանսավորվող նախագծերն ու առանձին անհատները: Բնականաբար, կշարունակենք անցյալ տարի սկսած եւ դեռեւս չավարտված նախագծերի իրականացումը: Մի խոսքով, անելիքները շատ են:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ նինոծմինդացիներին ու բոլորին շնորհավորել Ամանորի եւ Սուրբ Ծննդի առթիվ: Մաղթում, որ լավատեսությունը միշտ ուղեկից լինի ձեզանից յուրաքանչյուրի կյանքում: Երջանկություն, հաջողություն եւ բարեկեցություն Ձեզ ու ձեր ընտանիքներին:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ